

## ՎԱԽԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՔԱՆԴԱԿԸ

### Ե. Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում կատարված պեղումները զգալիորեն թարմացրին Վանի թագավորության պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը, որի արդյունքում ուրարտագիտությունը հսկայական թոփչք կատարեց: Հրապարակվել են առհելի քանակությամբ նոր նյութեր, որոնց ուսումնասիրությամբ առաջարկվել են այս քաղաքակրթության ձևավորման նոր մոդելներ և մատնանշվել պետականության բնորոշ ուղիներ: Ասվածը վերաբերում է նաև Վանի թագավորության արվեստի ուսումնասիրությանը<sup>1</sup>:

Ուրարտական քանդակործությունը բովանդակությամբ բազմազն է և բազմաբնույթ: Բացի մանրաքանդակներից, որոնք զարդարում են տարբեր կաթսաներ և դույլեր՝ գտնվել են առանձին աստվածների, կենդանիների և երեակայական էակների մետաղյա ծուլածո քանդակներ: Դրանց հիմնական մասը պատրաստված է բրոնզից: Որոշ քանակներ ծածկված է եղել ոսկյա թիթեղներով և զարդարված գունավոր քարերով: Բացի մետաղականից գտնվել են նաև սակավաթիվ քարե, փայտե և կավե արձաններ, որոնք նմանակել են մետաղե արտեֆակտերը:

Գտածոները իրենց նշանակությամբ բաժանվում են մի քանի խմբի՝ 1) ուրարտական աստվածների արձաններ, 2) կահույքը զարդարող քանդակներ, 3) կենդանիների գլուխներ, որոնք զարդարում են մարտակառքերի քաշանները:

Առաջին խմբին են պատկանում – ուրարտական աստվածների երեք ծափալային քանդակները: Դրանցից առաջինը ներկայացված է 1874 Վանում գտնված բրոնզե արձանիկով: Այն իրենից ներկայացնում է ոչ մեծ, (բարձրությունը 19,7 սմ), արմունկները ծալված, առաջ ծգված ծեռքերով, ամբողջ հասակով կանգնած կերպար: Նրա աջ բաց ափը առաջ է ծգված ողջունի համար, իսկ ձախ սեղմված բուռնցքի մեջ կա անցք ինչ-որ իր (գաղաքան, նիզակ) տեղադրելու համար: Գլխին կրում է եղջյուրներով (գաղաքան, նիզակ) տեղադրելու համար: Վարդի կրում է մինչև զարդարված սրածայր սաղավարտ, հագին ունի երկար, հարթ, մինչև կրունկները հասնող, կարճ թևերով գոտեկապ զգեստ: Պարզորոշ ընդգծված են բորբիկ ոտքերի մատները: Մանրամասն ընդգծված են դեմքի առանձնա-

<sup>1</sup> Ա. Դմայակյան, Տարեգիրք, Գիտական աշխատությունների ժողովածու. Երևան, 2008. էջ 3-5:

Հատկությունները՝ աստվածը պատկերված է ծեր հասակում, նա ունի երկար, մինչև կրծքի կենտրոնը հասնող մորուք, սաղավարտի տակից թափվող ալիքածե մազեր: Ընդգծված է լայն ճակատը, խիտ հոնքերը, նշանած աչքերը, ուղիղ քիթը և սեղմված բերանը: Քանի որ նա չի կրում Շիվինիի և Թեյշեբայինի հատկանիշները, ապա այս արձանը խորհրդանշում է Ուրարտուի գերագույն աստված Խալդին:

Ուրարտական աստվածների երկրորդ արձանը 1941 թ. գտնվել է Կարմիր բլուրում: Այն նույնպես պատկերում է ամրող հասակով կանգնած անմորուք, հասուն, լի ուժերով աստծո կերպարանք: Նա կրում է կարճ թևերով զգեստ, որը զարդարված է քառակուսի վարդյակով, իսկ փեշերը ծոպերով: Նրա ձախ ուսով անցնում է լայն լանջագոտի, որը նույնպես զարդարված է ծոպերով: Աջ ձեռքում բռնել է սկավառակածե գուրզ, իսկ ձախում՝ մարտական կացին: Քանդակի ստորին մասը զարդարված է թափված տերևներից կազմված պսակով և երկաթե ծողով՝ ամրացնելու համար: Աստծո գլուխը ծածկված է եղջյուրներով զարդարված կլոր գլխարկով, որի վրա բարձրանում է վերին մասում օղակ ունեցող թմրուկը, ըստ երևույթին ժապավեններ ամրացնելու համար: Աստծո դեմքը կլորավուն է, նրա կլոր աչքերը ծածկված են կիսափակ կոպերով, քիթը ուղիղ է, բերանը փակված է ամուր սեղմված կլորավուն շրթունքներով:

Երրորդ արձանը պատկերում է նստած (գահը բացակայում է) աստվածուհու, որը գտնվել է 1907 թ. Վանից ոչ հեռու Դարաբեյի ամրոցում: Քանդակի բարձրությունը 12 սմ է՝ պատկերված է վարդյակներով զարդարված, մինչև կրունկները երկար զգեստ հագած կնոջ ֆիգուր: Գլուխը ծածկում է նույնանման վարդյակներով երկար քող, իսկ կուրծքը զարդարում է դաշույնի նման մի կախիկ, որի բռնակը հարդարված է նստած առյուծի քանդակով: Ինչպես և Խալդի աստծո քանդակը, այնպես էլ այս գտածոն ունի ծալված առաջ բերված ձեռքեր: Աջ բաց ափով նա ողջունում է, իսկ ձախի բռունցքի մեջ կա անցք՝ ինչ-որ խորհրդանշան տեղափորելու համար: Սքանչելի ձեռվ պատկերված է նրա դեմքը՝ խոշոր նշանած աչքեր, քթարմատում միացող լայն հոնքեր, ուղիղ, նուրբ քիթ և բարակ, ժպտացող շուրթեր: Բ. Պիոտրովսկու կարծիքով այս արձանիկը պատկերում է Խալդի աստծո կնոջը<sup>1</sup>: Արուբանիին<sup>2</sup>:

Երկրորդ խմբին են վերաբերում ուրարտական կահույքը զարդարող քանդակները, որոնք ներկայացված են առանձին արձաններով կամ տարբեր կենդանիների մարմնի մասերով: Այս խմբի մեջ առանձնակի տեղ են

գրավում 1877-1885 թ. թոփրակ կալեռում գտնված գահերի (ըստ երեսույթին 3 գահի) մասերը զարդարող քանդակները, որոնք հանդիսանում են ուրարտական արվեստի սքանչելի նմուշներ: Նրանք բոլորն էլ՝ դատելով պահպանված հետքերի, ծածկված են եղել ոսկյա բարակ թիթեղով և զարդարվել են գունավոր քարերով, գունապակով: Այս գահերից մեկը, որը վերականգնվել է Դ. Բառնետի կողմից իրենից ներկայացնում է չորս ոտքերով, բարձր մեջքով և հարթ նստուկով մի բազկաթոռ, որի արմնկակալները զարդարված են եղել առյուծների քանդակներով: Գահի ոտքերը ոչ թե ամբողջական են, այլ կազմված են եղել մի քանի բաղադրական շարահարկ մասերից: Առաջին շարահարկը կազմված է առյուծների մեջքին կանգնած մարդկանց արձաններից, երկրորդը՝ երեք թևավոր գրիֆոնների քանդակներից, որոնցից ներքեւ տեղադրված են փորագրած ոտքերը: Նման դասավորումը, շարահարկի բարձրությունը, գահի նստարանը տեղադրում են այնքան բարձր, որ նստողի ոտքերը պետք է կախված մնային: Այդ պատճառով գահի առջև տեղադրված էր փորագրած փոքրիկ նստարան:

Այս գահը զարդարող մանրաքանդակները բաժանվում են երեք ենթախմբերի՝ 1) առանձին կանգնած մարդու արձան, 2) կենդանիների վրա կանգնած աստվածների արձաններ և 3) երևակայական կենդանիների արձաններ:

Առաջին ենթախմբին վերաբերվում է առանձին կանգնած մարդու քանդակը: Այն պատկերում է ամրող հասակով կանգնած մի մարդու (բարձրությունը 36 սմ), որը կրում է կարճ թևերով հարուստ նախշազարդված երկար զգեստ: Բաց թևերին երևում են ապարանջաններ: Նրա ձախ ուսով անցնում է լայն ժապավեն, իսկ վիզը զարդարված է կիսալուսնածե կախիկով: Նա ձախ ծալված ձեռքով բռնել է ժապավենը, իսկ աշով՝ ծաղիկ: Նրա դեմքը պատրաստված է սպիտակ քարից, պարզ լոնդգծված են աչքերը, աղեղնածե հոնքերը, ուղիղ, մեծ քիթը և սեղմված շրթունքներով բերանը (գլխի վերին մասը ջարդված է):

Երկրորդ ենթախմբին են վերաբերում կենդանիների վրա կանգնած հինգ աստվածների արձանները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ առյուծի կամ ցլի վրա կանգնածների:

Առյուծի վրա կանգնածներից մեկը պատկերում է մի բարձրաստիճան մարդու, որը կրում է երկար զգեստ: Փեշերը զարդարված են ծոպերով, իսկ ձախ ուսով անցնում է լայն ժապավեն: Նրա գլուխը զարդարում է խույրը, լայն ճակատը հարդարված եղջյուրներով: Քանդակը ծուլված է առանց ձեռքերի, որոնց փոխարեն մարմնի երկարությամբ արված են կտրվածք-

<sup>1</sup> Uesula Seidl, Bronzekunst Urartus, Mainz am Rhein 2004, p.130, abb. 96.

<sup>2</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Իստորիա և կուլտուրա Ուրարտ, Երևան, 1944, ստ. 233, բլ. 75.

<sup>1</sup> Uesula Seidl, Bronzekunst Urartus, Mainz am Rhein 2004, p.62-63, abb. 25.

ներ: Քարե ներդիրից պատրաստված դեմքը կոտրած է: Առյուծը, որի վրա կանգնած է Խալդի աստվածը, պատկերված է նստած, ընդ որում գազանի առջևի թաթերը ունեն ցուլի կճղակների ձև: Գիշատիչի գլուխը զարդարում են ցուլի եղջյուրները: Երկրորդ նման քանդակը, որի վերին մասը չի պահպանվել, ունի վերը նկարագրվածի համանման ձևը (պահպանված բարձրությունը 15 սմ): Ցուլի վրա կանգնած երեք քանդակները (որոնք ունեն 17,5, 21,5 և 23 սմ բարձրություն) իրենց ձևերով նույնպես կրկնում են առաջինի ձևը: Նրանք նույնպես ունեն քարե հարթ դեմքեր և ձեռքերի փոխարեն կտրվածքներ: Տարբերվում են միայն նրանով, որ կանգնած են ոչ թե առյուծի, այլ ցուլերի վրա, որոնք նույնպես նստած դիրքով են քանդակված: Ավելի բազմազան են իրական և երևակայական կենդանիները, որոնք որոշ տարբերություններով, բաժանվում են երեք խմբերի:

Առաջին խմբին է պատկանում գրիֆոնի քանդակը (բարձրությունը 21,2 սմ): Այն իրենից ներկայացնում է թևավոր առյուծ, որն ունի գիշատիչ թռչունի գլուխ, իսկ աչքերը և հոնքերը ներզարդարված են: Խոշոր արծվի թևերը ընդգծված են դրվագմամբ, նրա չորս ոտքերը ավարտվում են թռչունի ճանկերով, իսկ պոչը կտրված է:

Երկրորդ խմբին են պատկանում երեք երևակայական առյուծների քանդակներ: Դրանցից առաջինը պատկերված է գահին նստած: Այն իրենից ներկայացնում է մի թևավոր կենդանի, որն ունի առյուծի գլուխ և հետին ոտքեր (մարմնի մեծ մասը ծածկված է բացված թևերով): Առաջին ոտքերը ցուլի են: Այս երևակայական կենդանին պատկերված է նստած դիրքով (բարձրությունը 15 սմ), խոշոր թևերը սեղմված մարմնին: Հստ երևութին նա ինչ որ քանով անհանգստացած է, քանի որ ականջները սեղմված են գլխին, բաց երախում երեսում են ժանիքները, իսկ մոռւթը կնճռուտված է:

Երկրորդ քանդակը ի տարբերություն առաջինի, թևեր չունի (բարձրությունը 28 սմ) և նույնպես պատկերված է նստած դիրքով՝ առջևի ցլակերպ ոտքերը ծալած: Հատկապես ընդգծված են գիշատչի գլխի մանրամասները՝ սեղմված ականջները, բաց երախը, կկողված աչքերը, մոռւթի կնճիւները և բազմաշարք պարույրներով զարդարված կուրծքը:

Առյուծների վերջին քանդակը ներկայացված է մարդու իրանով, թևավոր առյուծ (բարձրությունը 16 սմ): Թևավոր գիշատիչը պատկերված է հանգիստ կանգնած դիրքով: Նրա լայն թևերը երկու կողմից զարդարված են դրվագումով: Արմունկներում ծալված ձեռքերը խաչվում են կրծքին, ընդ որում մի ափը ծածկում է մյուսին: Արձանիկի դեմքը պատրաստված է ներդրված սպիտակ քարից: Թեք նշանեւ աչքերը և երկար, աղեղնածեւ հոնքերը ներզարդած են: Քիթը ուղիղ է, փոքր բերանը սեղմված: Հարուստ զարդարված գլխարկի վրա ընդգծված են կեռ եղջյուրները: Գլխարկի տակից ուսերին են թափվում

ոլորվող մազերը, իսկ կուրծքը զարդարված է կիսալուսնաձև կախիկով: Քանդակի աջ ուսով անցնում է լայն ժապավեն: Հետաքրքիր է ձևավորված նրա հագուստը՝ բարակ գործվածքից կարված կարծ թևերով վերնաշապիկ, որի տակից աջ ուսով զարդարում է գեղեցիկ վարդյակ<sup>1</sup>:

Հաջորդ խմբին են պատկանում չորս երևակայական ցուլերի քանդակները: Դրանցից առաջինը մասամբ թևավոր ցուլի արձան է (բարձրությունը 22,5 սմ): Քարե ներդրվող դեմքը կլորավուն է: Գլուխը ծածկված է վարդյակներով հարդարված գլխարկով, որը դեպի ձախ է թեքված, իսկ վզի մանրամասները ընդգծված են դրվագման միջոցով: Թևերը բարձրացրած են: Երկրորդ քանդակը նույնպես պատկերում է մարդու իրանով խոշոր թևավոր ցուլի (բարձրությունը 20,3 սմ): Նրա քարե դեմքը նույնպես կլոր է: Թևերը բացված են: Կուրծքը զարդարված է հարուստ նախշազարդված լանջագոտիով: Արմունկները ծալված, ձեռքերը խաչված են կրծքին: Երկու՝ վերը նկարագրված արձանիկները կանգնած դիրքով են, ոտքերի վրա ընդգծված կճղակներով և պոչի հետքերով: Ցուլերի մյուս երկու արձանիկները պատկերված են նստած դիրքով: Դրանցից մեկը (բարձրությունը 10,6 սմ) պատկերված է գլուխը ձախ շրջած, հստակ ընդգծված ականջներով և եղջյուրներով: Քարե դեմքը չի պոչի առջինի ճանկերով, իսկ պոչը կտրված է:

Ավարտելով թոփրակ կալեից գտնված գահը զարդարող քանդակների նկարագրությունը, հարկ է նշել, որ նման քանդակներ հայտնի են նաև այլ հնավայրերից: Դրանցից մեկը առյուծի բրոնզե արձան է, գտնված Կապանի շրջանի Սղնակ գյուղից: Այն պատկերում է նստած գիշատչի, հետևի ծալված և առջևի ծգված ոտքերով: Խոշոր գլուխը վեր է բարձրացված, լայն բացված երախում երեսում են ժանիքները: Ընդգծված են քթանցքերը, աչքերը, գլխին սեղմված ականջները և պոչը: Միգուրի ամբողջ տեսքը խոսում է կենդանու ուժի և հզորության մասին, ինչը ցույց է տրված ընդգծված մկաններով: Քանդակը միաձույլ է, նրա երկարությունը 20 սմ է, բարձրությունը՝ 13 սմ, քաշը՝ 5 կգ 175 գ: Քանդակի ստորին մասում կան եռանկյունի խորացումներ, ինչը վկայում է, որ այն կանգնած է եղել ինչ-որ ելուստի վրա, զարդարելով կահույքի մասերը: Մեկ այլ առյուծի արձանիկ է գտնվել ներքին խնձոր (Կայալի դերե) ամրոցից: Այն համարյա ամբողջությամբ կրկնում է Սղնակից գտնվածը, ունենալով որոշ տարբերություններ չափսերի և ձևերի մեջ: Արձանիկի երկարությունը 9,3 սմ է, բարձրությունը 6,4 սմ: Նրա գլուխը և ոտքերը միաձույլ են, ի-

<sup>1</sup> Uesula Seidl, Bronzekunst Urartus, Mainz am Rhein 2004, p.62-63, abb. 25.

բանը սնամեջ: Կրկնելով Սզնակի արձանի ձևը, այն տարբերվում է ընդգծված բաշով: Քանդակի ստորին մասում նույնպես կան եռանկյունաձև փոսիկներ՝ կահույքին ամրացնելու համար:

Բազմաթիվ աթոռների, բազկաթոռների, գահերի և սեղանի մասեր հաճախակի զարդարված են եղել տարբեր կենդանիների ոտքերի քանդակներով: Ուրարտական ամրոցներում գտնվել են նման կահույքի ոտքերի բրոնզե ծայրակալներ<sup>1</sup>:

Առյուծի Ոտքեր – այս իրերը որպես կանոն ուղղանկյուն են, սնամեջ և ձևավորված են ուռուցիկ ճանկերով: Այդպիսի բրոնզե թաթեր գտնվել են Կարմիր բլուրից, Կայալի դերեից, Ալթին թեփեից և Թոփրակ կալեից: Բացի դրանից բազմաթիվ նման թաթեր վերջին տարիներին գտնվել են Արեմտյան Հայաստանի տարածքից և պահպատ են Բազելի թանգարանում: Որոշ թաթերի վրա կան անցքեր՝ գունավոր քարեր տեղադրելու համար:

Եռլի Ոտքեր – սրանք, ինչպես և առյուծի թաթերը, սնամեջ են՝ փայտե ոտքերին հագցնելու համար: Այդպիսի ոտքեր գտնվել են Կարմիր բլուրում, Ալթին թեփեում, Կայալի դերեում: Ավելի պարզունակ ձևի ծայրակալներ հայտնի են Երևանի դամբարանում, Մարտունու շրջանի Գեղահովիտ գյուղում:

Պալատական և տաճարային համալիրների ներքին և արտաքին հարդարման համար կարևոր դեր էին խաղում նաև աշտանակները, որոնց մի մասը հարուստ զարդարված է եղել: Այս աշտանակները, որպես կանոն, ներկայացնում էին Եռոտանիներ, որոնցից բարձրացող երկար ձողի վրա կար թասածե ելուստ, որի մեջ դրվում էր ձիթաճրագը: Մրանց պարզունակ երկաթե ձևերը հայտնի են Կարմիր բլուրից: Սակայն կան նաև բրոնզե հարուստ ձևավորված օրինակներ: Դրանցից մեկը, որը գտնվել է Թոփրակ կալեում, պահպատ է Համբուրգի արվեստի և արհեստների թանգարանում: Նրա երկար բրոնզե ձողը, որը զարդարված է չորս թափվող տերևների ձևունեցող պսակներով, հենված է ցածր եռոտանու վրա (ընդհանուր բարձրությունը 136 սմ): Ոտքերը ավարտվում են ցլի կճղակներով, որոնք դուրս են գալիս առյուծների բաց երախներից: Եռոտանու կենտրոնից հավասարակշռությունը պահպանելու համար իշխում է չորրորդ ոտքը, որի վերին կլորավուն հատվածը զարդարված է խոշոր տերևածե պսակով: Կորացող ոտքերի վերին հատվածում տեղադրված է եղել երեք (պահպանվել է մեկը) մարդու գլուխներով, նստած, թևերով ցուլի արձանիկներ: Այս աշտանակի մաքրման ընթացքում բացվել էր Ռուսա թագավորի արձանագրությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Սկրյան, Գեղահովտի Կանտոսպյան (Ուրարտական) քարայր-դամբարանը, Երևան 2001, աղ. 21-23:

<sup>2</sup> Բ. Բ. Պոտրովսկի, Վանե պատմություններ, Մոսկվա, 1959, սր. 174, բա. 35.

Հետաքրքիր է նշել, որ Վանի հնավաճառներից մեկը պահել էր նկարագրված աշտանակների արձաններից և այն ինչ-ինչ ճանապարհներով հետագայում ընկել էր էջմիածնի թանգարան (այժմ պահպատ է Հայաստանի պատմության թանգարանում): Այն բավականին նմանություն ունի գտնվածի հետ: Մյունիսենի թանգարանում պահպատ է Հյուսիսային Սիրիայում գտնված մի այլ հետաքրքիր բրոնզե աշտանակ, որը մասնագետների մի մասը համարում է ասորական, մյուսները՝ ուրարտական, արվեստի սքանչելի նմուշ: Այն իրենից ներկայացնում է կարճ եռոտանի, որի ձողը (ընդհանուր բարձրությունը 25,5 սմ) պատկերում է երկար զգեստ հագած, ձեռքերը կրծքին խաչած մի մարդու, ում գլխարկի վրա կա խողովակածե ելուստ՝ ճրագը տեղադրելու համար: Նա ունի կլորավուն դեմք, երկար մազեր, խիտ հոնքեր, նշանակալի աչքեր: Ուղիղ քիթը ստորին մասում փոքր ինչ լայնանում է, կլոր շրթունքներն ամուր սեղմակած են, ընդգծված է փոքրիկ մորուքը:

Երրորդ խումը ներկայացված է մարտակառքերի քաշանները գարդարող արձանիկներով: Դրանք ներկայացված են ձիերի երկու բրոնզե գլխիկներով: Դրանցից մեկը գտնվել է Կարմիր բլուրում: Այն իրենից ներկայացնում է կարճ սնամեջ վզով ոչ մեծ ձիու գլուխ: Վիզն ալիքածե գծերով զարդարում է բաշը և մազափունջը: Մեծ վարպետությամբ ընդգծված են ականջները, կլորավուն աչքերը, քթանցքերը և փակ բերանը: Բ. Պիոտրովսկիին համարում է դրանք ուրարտական արվեստի լավագույն նմուշներից: Այս քանդակի բնորոշ հատկությունը նրա ճակատի և մոռւթի կողային տափակ հատվածներն են, ինչը մտածել է տալիս, որ մանրակերտը, որից ձուլվել է կաղապարը, փայտից է եղել: Հետաքրքիր է նրա պատրաստման եղանակը՝ ձիու մոռւթը, բաշը և ականջները մազափունջի հետ ձուլվել են առանձին և ապա այնպես ամուր են զոդվել, որ միայն կոտրված հագածում է երկում պատրաստման եղանակը<sup>3</sup>:

Ոչ պակաս հետաքրքիր է Ալթին թեփեից գտնված ձիու բրոնզե գլուխը: Նրա երկար կլորավուն վիզը նույնպես զարդարված է բաշով և ականջների միջև ընդգծված է մազափունջը: Գլուխը փոքր-ինչ իջեցված է: Պարզորեն ընդգծված են կարճ ցցված ականջները և կլորավուն աչքերը: Քթանցքերը առանձնացված են կլոր շրթանակներով, շուրթերը լայն են, բերանը քիչ բացված է:

Արամուսում 2007 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվեց բարձրությակ բրոնզից ցուլի արձանիկ: Ունի ընդգծված եղջյուրներ, կլորավուն գնդածե աչքեր, կարճ պոչ, ձգված մարմին և համեմատաբար կարճ ոտքեր: Իր ոճական առանձնահատկություններով արձանիկը հանդիսանում է Վա-

<sup>3</sup> Ա. Ա. Եսայան, Կարմիր Բլուր, Երևան, 1982, էջ 51:

նի թագավորության քանդակագործության ինքնատիպ նմուշ և թվագրվում է մ.թ.ա. 8-6-րդ դարերով<sup>2</sup>:

Այն նաև հետաքրքիր աղերսներ է գտնում, ինչպես Կոլխիդա-Կորանյան մետաղի, փոքր Ասիական բրոնզի, այնպես է Լուրիստանյան արտեֆակտների հետ:

Վերը նշված քանդակներով զարդարված իրերը՝ կահույքը, սպասքը, մարտակառքերի դետալները հանդիսանում են ուրարտական վերնախավի սեփականությունը: Ուրարտական ավագանին դրանք օգտագործում էր ոչ միայն արքունիքում, այլև այցելությունների ժամանակ հեռավոր ամրոցներում և տաճարներում: Այս և արվեստի մյուս նյութերը բազմիցս ընդօրինակվել, արտահանվել են Միջերկրականի տարբեր շրջաններ, իրան և Հյուսիսային Կովկաս, տարածելով ուրարտական արվեստի ազդեցությունը մոտիկ և հեռավոր հարևանների մշակույթի վրա:

<sup>2</sup> H. Avetisyan, W. Allinger-Csollich. A bronze sculpture from Aramus, Aramazd volume III, Yerevan, 2008, p. 87-90.